Հովհաննես Թումանյան

Երկինք ու երկիր

Իր խոր հայացքով երկինքը մի օր
Ներքև՝ մայր երկրի երեսին նայեց,
Տեսավ գեղեցիկ դաշտեր, սար ու ձոր,
Անտառներ, ծովեր... և սիրահարվեց:

Երկիրը՝ թմրած, տխուր, ցրտամեռ,
Հանկարծ սթափվեց գարունքվա կյանքով,
Վառվեցին սրտում հրրեղեն բոցեր,
Եվ շնչեց հազար ծաղկանց բուրմունքով...
Եվ պինդ սիրեցին էսպես իրարու

Իրարից բաժան, իրարից հեռու
Երկինք ու երկիր...
Բայց ե՞րբ է սերը արգելք հարցընում.
Հենց որ գալիս է գիշերը հասնում,
Երկինքն աստղազարդ, անհամբեր, ագահ,

Իր հազարավոր աչքերը բանում,
Հիացած նայում սիրուհու վրրա,
Մինչև լույս նայում և չի կշտանում:
Եվ աստղ–աչքերը վառ–վառ ցոլանում,
Ընկնում են երկրի կրծքերը ջրային,

Որ փրփրրում են, ուռչում, բարձրանում,
Ճգնում են հասնել վեր՝ սիրահարին:
Եվ սիրող երկինքն ավելի վառված,
Գիշերվա բոլոր զուքսով զարդարված,
Փռում է իրեն բոլոր փառքերը,

Իր բոլոր տենչերն, այրվող կրքերը,
Վառվում, բորբոքվում,
Փարում է, զգվում...
Եվ երբ չի հասնում իր անհաս սերին,
Լուռ–լուռ ճպում է ցոլուն աչքերին,

Ցոլուն աչքերից գիշերվա մթնում
Երկրի երեսին ցողեր են ընկնում,
Մարգարիտ ցողեր՝ արցունք երկնային...
Իսկ էդ ժամանակ երկիր–սիրուհին
Հազար շրթունքով սարերի ծերից

Համբույր է տալիս թխպոտ ամպերին,
Անհուն ծովերից, անթիվ ծովերից
Հազար կրծքերով ձգտում է յարին:
Տանջվում է ուժգին, վառվում է սերը,
Հուզվում են, փրփրում նրրա ջրերը,

Սակայն չեն հասնում քնքուշ փափագին,
Ծանրը տնքում են, հեծում մոլեգին...

Ամպերի տակից,
Իր մթին գահից
Բոլորը տեսնում լուսինը անքուն

Եվ բանաստեղծին պատմում է թաքուն,
Թե ինչպես ծովը գիշերվա մթնում
Ուռցնում է իրեն կուրծքը տարփալի,

Երկինքը հազար աչքերով ժպտում,
Եվ գաղտնի սիրո համբույր է տալի.

Եվ իրար համար երգեր են ասում,
Իրար փայփայում, զգվում, արտասվում,
Ինչպես կենդանի, զգայուն մարդիկ...
Եվ բանաստեղծը տխրում է սաստիկ,
Նախանձում է նա, թե ինչո՞ւ չունի

Ինքն էլ էն տեսակ մի վեհ սիրուհի:

1894